ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 23.08.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ

ՔՆՆՈՂ ԱՆՁԻ

թիվ ԳԲԽ-ԷՍ-2018/94

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ) քննելով «ՍԱՄԻԿ ԵՎ ՎԱՐԴԱՆ» ՍՊԸ-ի կողմից 10.08.2018թ. ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

1. **<u>«ՍԱՄԻԿ ԵՎ ՎԱՐԴԱՆ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>**

«ՍԱՄԻԿ ԵՎ ՎԱՐԴԱՆ» ՍՊԸ-ն (այսուհետ՝ նաև Ընկերություն) ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին 10.08.2018թ. ներկայացրել է բողոք, որով հայտնել է հետևյալը.

«Արտաշատ քաղաքի թիվ 3 մանկապարտեզի /այսուհետ նաև՝ Պատվիրատու/ կողմից սննդամթերքի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԱՐՏՔՅՄ-ԳՀԱՊՁԲ-18/02» ծածկագրով գնման ընթացակարգ /այսուհետ նաև՝ Ընթացակարգ/:

Ընթացակարգի հրավերի թիվ 7 հավելվածի՝ պայմանագրի նախագծին կից ներկայացված թիվ 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագրի /այսուհետ նաև՝ Տեխնիկական բնութագիր/, սույն բողոքով վիճարկվող՝ 1-րդ, 5-րդ, 37-րդ, 38-րդ, և 39-րդ չափաբաժիններով սահմանվել է հետևյալը.

Հրավերով նախատեսված չափաբաժնի համարը՝ 1. Անվանումը և ապրանքային նշանը՝ Կարագ, Տեխնիկական բնութագիրը՝ Կարագ Սերուցքային, բաղադրությունը կաթնայուղ ոչ պակաս քան 82.9%, խոնավությունը ոչ ավելի քան 16%, պինդ ոչ յուղային բաղադրիչներ ոչ ավելի քան 1.4%, 100 գրամում 3090ԿՋ:

Հրավերով նախատեսված չափաբաժնի համարը՝ 5. Անվանումը և ապրանքային նշանը՝ Տավարի միս տեղական, Տեխնիկական բնութագիրը՝ Միս տավարի թարմ կամպաղեցրած, ոսկորի և մսի հարաբերակցություն՝ համապատասխանաբար 70-80% մսեղիք, զարգացած մկաններով, Պաղեցրած մսի մակերեսը չպետք է լինի խոնավ, պահված 0-4°C ջերմաստիճանի պայմաններում, I պարարտության: Անվտանգությունն ըստ N2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդված: Մատակարարված ապրանքի համար ներկայացնել փասթաթուղթ որով վկայում է սպանդանոցի մսի իսկությունը: Բավարարի ՍՆՆԴԱՄԹԵՐՔ ՏԵՂԱՓՈԽՈՂ ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ԱՆՁՆԱԳՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ԱՆՁՆԱԳՐԻ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՁԵՎԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ 14 մարտի 2017 թվականի N 85-Ն հրամանի պայմաններին:

Հրավերով նախատեսված չափաբաժնի համարը՝ 37. Անվանումը և ապրանքային նշանը՝ Եգիպտացորեն /պահածոյացված/, Տեխնիկական բնութագիրը՝ 1000 գր տարաներով, 100 գր սննդային արժեքը ՝ ճարպեր ոչ ավելի քան 0,7 , սպիտակուցներ ոչ ավելի քան 2,9 գր, կալորիականությունը առնվազն 57 կկալ, առանց կոնսերվատների: Պիտանելիության ժամկետը ոչ ավելի քան 24 ամիս:

Հրավերով նախատեսված չափաբաժնի համարը՝ 38. Անվանումը և ապրանքային նշանը՝ Վարունգի մարինադ, Տեխնիկական բնութագիրը՝ 1000 գր տարաներով, բաղադրությունը վարունգ, սխտոր, ծովաբողկ, մաղդանոս, սամիթ, քացախաթթու, աղ, 100 գր սննդային արժեքը՝ սպիտակուցներ 0, ածխաջրեր ոչ ավելի քան 3գր, սպիտակուցներ 0, կալորիականությունը ոչ պակաս քան 125 կկալ, Պիտանելիության ժամկետը ոչ ավելի քան 24 ամիս, առանց կոնսերվատների:

Հրավերով նախատեսված չափաբաժնի համարը՝ 39. Անվանումը և ապրանքային նշանը՝ Քյուֆթա, Տեխնիկական բնութագիրը՝ բաղադրությունը տավարի միս, սպիտակուցներ ոչ ավելի քան 12 գր, ճարպեր ոչ ավելի քան 15 գր: Պահպանման ճամկետները ոչ ավելի քան 15 օր: Մատակարարման ժամանակ պահպանման ժամկետի մնացորդ ոչ պակաս քան 7 օր:

Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել միայն «Սամիկ և Վարդան» ՍՊԸ-ն /այսուհետ նաև՝ Ընկերություն/:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի /այսուհետ նաև՝ Հանձնաժողով/ 30.07.2018թ. ժամը 10:00-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ Ընկերությունը ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցրած մասնակից:

Նույն արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը որոշել է 1-ին տեղ զբաղեցրած մասնակցին առաջարկել ներկայացնելու Ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իրենց համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը:

Ընկերության կողմից ներկայացվել է թիվ 6 հավելվածը՝ դիմում առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից հրավերով պահանջվող փաստաթղթերի ներկայացման մասին և թիվ 6.1 հավելվածը՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը:

Հանձնաժողովի 02.08.2018թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 3-րդ արձանագրության համաձայն՝ «Սամիկ և Վարդան» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Ընթացակարգի հրավերով պահանջվող որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերում առկա են անհամապատասխանություններ 1-ին, 5-րդ, 8-րդ, 22-րդ, 37-րդ, 38-րդ և 39-րդ չափաբաժինների մասով:

Նույն արձանագրության 3-րդ կետի համաձայն՝ հիմք ընդունելով վերոգրյալը՝ Հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրել է նիստը և ծանուցել մասնակցին առաջարկելով շտկել անհամապատասխանությունները:

«Սամիկ և Վարդան» ՍՊԸ-ն ներկայացրել է հետևյալ շտկումները.

Չափաբաժնի համարը՝ 1. Անվանումը և ապրանքային նշանը՝ Կարագ, ապրանքային նշանը՝ ԷՔՍՏՐԱ, արտադրողի անվանումը՝ ԱՐՄԱՆ ԸՆԴ ՊԱՌՏՆԵՐ ՍՊԸ, ծագման երկիրը՝ Ուկրաինա, տեխնիկական բնութագրերը՝ Կարագ Սերուցքային, բաղադրությունը կաթնայուղ ոչ պակաս քան 82.9%, խոնավությունը ոչ ավելի քան 16%, պինդ ոչ յուղային բաղադրիչներ ոչ ավելի քան 1.4%, 100 գրամում 3090ԿՋ:

Չափաբաժնի համարը՝ 5. Անվանումը և ապրանքային նշանը՝ Տավարի միս տեղական, արտադրողի անվանումը՝ տեղական, ծագման երկիրը՝ ՀՀ, տեխնիկական բնութագրերը՝ Միս տավարի թարմ կամ պաղեցրած, ոսկորի և մսի հարաբերակցություն՝ համապատասխանաբար 70-80% մսեղիք, զարգացած մկաններով, պաղեցրած մսի մակերեսը չպետք է լինի խոնավ, պահված 0-4°C ջերմաստիճանի պայմաններում, I

պարարտության: Անվտանգությունն ըստ N2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի ՝9-րդ հոդված: Մատակարարված ապրանքի համար ներկայացնել փասթաթուղթ որով վկայում է սպանդանոցի մսի իսկությունը: Բավարարի ՍՆՆԴԱՄԹԵՐՔ ՏԵՂԱՓՈԽՈՂ ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ԱՆՁՆԱԳՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ԱՆՁՆԱԳՐԻ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՁԵՎԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ 14 մարտի 2017 թվականի N85-Ն հրամանի պայմաններին:

Չափաբաժնի համարը՝ 37. Անվանումը՝ եգիպտացորեն /պահածոյացված/, ապրանքային նշանը՝ Տոպ Սան, արտադրողի անվանումը՝ ԶՊՍ Ջամար, Արաս Ֆուդ ՍՊԸ ծագման երկիրը՝ Լեհաստան, տեխնիկական բնութագրերը՝ 1000 գր տարաներով, 100 գր սննդային արժեքը՝ ճարպեր ոչ ավելի քան 0,7, սպիտակուցներ ոչ ավելի քան 2,9 գր, կալորիականությունը առնվազն 57 կկալ, առանց կոնսերվատների: Պիտանելիության ժամկետը ոչ ավելի քան 24 ամիս:

Չափաբաժնի համարը՝ 38. Անվանումը՝ Վարունգի մարինադ, արտադրողի անվանումը՝ ԱՐԹՖՈՒԴ ՍՊԸ, ծագման երկիրը՝ ՀՀ, Տեխնիկական բնութագիրը՝ 1000 գր տարաներով, բաղադրությունը վարունգ, սխտոր, ծովաբողկ, մաղդանոս, սամիթ, քացախաթթու, աղ, 100 գր սննդային արժեքը՝ սպիտակուցներ 0 , ածխաջրեր ոչ ավելի քան 3գր, սպիտակուցներ 0, կալորիականություը ոչ պակաս քան 125 կկալ, Պիտանելիության ժամկետը ոչ ավելի քան 24 ամիս, առանց կոնսերվատների:

Չափաբաժնի համարը՝ 39. Անվանումը՝ քյուֆթա, արտադրողի անվանումը՝ ՄՈՒՇ ՍՊԸ, ծագման երկիրը՝ ՀՀ, Տեխնիկական բնութագիրը՝ բաղադրությունը տավարի միս, սպիտակուցներ ոչ ավելի քան 12 գր, ճարպեր ոչ ավելի քան 15 գր: Պահպանման ճամկետները ոչ ավելի քան 15 օր: Մատակարարման ժամանակ պահպանման ժամկետի մնացորդ ոչ պակաս քան 7 օր:

Հանձնաժողովի 03.08.2018թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 4-րդ արձանագրության համաձայն՝ Ընկերության կողմից սահմանված ժամկետում ներկայացվել են արձանագրված անհամապատասխանության շտկումները: Հանձնաժողովի կողմից արձանագրվել է, որ Ընթացակարգի 1-ին, 5-րդ, 37-րդ, 38-րդ և 39-րդ չափաբաժինների մասով անհամապատասխանությունները Ընկերության կողմից չեն շտկվել:

Նույն արձանագրության 2-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ Հանձնաժողովը որոշել է Ընթացակարգը չշտկված չափաբաժինների մասով հայտարարել չկայացած:

Պատվիրատուի կողմից www.gnumner.am կայքում 06.08.2018թ. հրապարակվել է գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու վերաբերյալ որոշումը:

2.Բողոքի իրավական հիմքերը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի /այսուհետ նաև՝ Օրենք/ 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Նույն հոդվածի 5-րդ և 6-րդ մասերի համաձայն՝ առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո՝ հրավերով սահմանված ժամկետում՝

1) առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

2) հանձնաժողովը գնահատում է սույն մասի 1-ին կետի համաձայն ներկայացված փաստաթղթերի (տեղեկությունների) համապատասխանությունը հրավերով սահմանված պահանջներին, և հրավերով սահմանված դեպքերում ու կարգով գնահատում է տվյալ մասնակցի գնային և ոչ գնային (տեխնիկական) առաջարկի հիմնավորվածությունը:

Հայտը գնահատվում է բավարար, եթե սույն հոդվածի 5-րդ մասի համաձայն ներկայացված տվյալները բավարարում են հրավերով սահմանված պահանջները: Նման դեպքում մասնակիցը հայտարարվում է ընտրված:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /այսուհետ նաև՝ Կարգ/ 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է ապրանքների գնման դեպքում իր կողմից հաստատված հայտարարություն՝ առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ՝ պայմանով, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում հրավերով սահմանված կարգով ներկայացնում է ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ծագման երկիրը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի

միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ նույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև նույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ: Նույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթերն ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Կարգի 47-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված՝ ներառյալ կոմիտեի կողմից տրամադրված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև նույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը: Կարգի 48-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից.

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի բողոքարկելու պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի և գնումների հետ կապված բողոքներ քննող անձի գործողությունները (անգործությունը) և որոշումները:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի նույն օրենքի համաձայն նախքան պայմանագրի կնքումը բողոքարկելու պատվիրատուի և գնահատող

հանձնաժողովի գործողությունները (անգործությունը) և որոշումները գնումների հետ կապված բողոքներ քննող անձին:

Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

ա. արգելելու կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ,

բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման:

Նույն հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ բողոքի քննությունը բաց է հանրության համար, բացառությամբ պետական գաղտնիք պարունակող գնումների: Բողոքն ստանալու օրվանից հաշված՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում, այդ մասին գնումների հետ կապված բողոքներ քննող անձը հայտարարություն է հրապարակում տեղեկագրում:

Օրենքի 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ սույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքի քննության արդյունքներով ընդունված որոշման՝ ուժի մեջ մտնելու օրը:

3.Բողոքի վերլուծությունը և պահանջը.

Այսպիսով, Արտաշատ քաղաքի թիվ 3 մանկապարտեզի կողմից սննդամթերքի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԱՐՏՔՅՄ-ԳՀԱՊՁԲ-18/02» ծածկագրով գնման ընթացակարգ:

«Սամիկ և Վարդան» ՍՊԸ-ն, Ընթացակարգի թիվ 4 հավելվածով նախատեսված՝ առաջարկվող ապրանքի հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության մասին հայտարարության համաձայն նշել է, որ «ԱՐՏՔՅՄ-ԳՀԱՊՁԲ-18/02» ծածկագրով ընթացակարգին մասնակցելու նպատակով իր կողմից ներկայացված մասնակցության դիմումում նշված չափաբաժնի (չափաբաժինների) մասով առաջարկվող ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրերը համապատասխանում են նույն հրավերի համապատասխան չափաբաժնում (չափաբաժիններում) նշված ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրերի պահանջներին:

Նույն հայտարարությամբ մասնակիցը պարտավորվել է առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում «ԱՐՏՔՅՄ-ԳՀԱՊՁԲ-18/02» ծածկագրով ընթացակարգի

հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել իր կողմից առաջարկվող ապրանքի (ապրանքների)՝ անվանումը, ապրանքային նշանը, արտադրողը, ծագման երկիրը և տեխնիկական բնութագրերը (ապրանքի ամբողջական նկարագիր):

Ընթացակարգի հրավերի 2 մասի 3-րդ կետի 3.1 ենթակետի համաձայն՝ նույն հրավերով նախատեսված՝

1) որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հիմնավորելու համար առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովի քարտուղարի՝ սույն հրավերով նախատեսված էլեկտրոնային փոստին ուղարկելու միջոցով, հանձնաժողովին է ներկայացնում սույն հրավերի 6-րդ հավելվածով նախատեսված գրությունը, որին կցվում են՝

ա. իր կողմից հաստատված՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը՝ համաձայն հավելված N 6.1-ի:

Ընկերության կողմից ներկայացվել է թիվ 6.1 հավելվածը, այն է՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը:

Հանձնաժողովի 03.08.2018թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 4-րդ արձանագրության համաձայն՝ Ընկերության հայտը մերժվել է, քանի որ 1-ին, 5-րդ, 37-րդ, 38-րդ և 39-րդ չափաբաժինների մասով չեն շտկվել Հանձնաժողովի կողմից 02.08.2018թ. թիվ 3 արձանագրությամբ արձանագրված անհամապատասխանությունները:

«Սամիկ և Վարդան» ՍՊԸ-ի կողմից որպես իր կողմից առաջարկվող ապրանքի (ապրանքների)՝ անվանումը, ապրանքային նշանը, արտադրողը, ծագման երկիրը և տեխնիկական բնութագրերը (ապրանքի ամբողջական նկարագիր) 1-ին, 5-րդ, 37-րդ, 38-րդ և 39-րդ չափաբաժինների մասով ներկայացրել ամբողջությամբ նույն՝ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/21» ծածկագրով գնման ընթացակարգի թիվ 7 հավելվածին՝ պայմանագրի նախագծին կից ներկայացված թիվ 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագրերը: Այս պարագայում Ընկերության համար անհասկանալի է, թե որ մասով «Սամիկ և Վարդան» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ապրանքների տեխնիկական բնութագերը չեն համապատասխանում ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագերին, եթե ամբողջությամբ նշվել է այնպիսի բնութագրեր, որը հաստատվել և հրապարակվել է Ընթացակարգի հրավերով:

Ինչ վերաբերում է Հանձնաժողովի կողմից արձանագրված այն հանգամանքին, որ հստակ չի նշվել որոշ չափանիշներ, ապա այդ մասով կրկին ցանկանում ենք նշել, որ Պատվիրատուն հենց ինքն է սահմանել նման բնութագրերով ապրանքներ, և Ընկերությունը համաձայնել է մատակարարել հենց այդ բնութագրերով ապրանքները՝ առանց որևէ շեղման:

Վերոգրյալ իրավական հիմքերի և փաստական հանգամանքների վերլուծությունից հետևում է, որ Արտաշատ քաղաքի թիվ 3 մանկապարտեզի «ԱՐՏՔՅՄ-ԳՀԱՊՁԲ-18/02» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից խախտվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին, 5-րդ, 6-րդ մասերով, ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /այսուհետ նաև՝ Կարգ/ 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ և «ՀՀ ԱՐՏՔՅՄ-ԳՀԱՊՁԲ-18/02» ծածկագրով ընթացակարգի հրավերի 2-րդ մասի 3-րդ կետի 3.1 ենթակետով սահմանված պահանջները, քանի որ Ընկերության կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում «Հավելված 6.1» ներառված են Ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրով սահմանված ապրանքների տեխնիկական բնութագրերը ամբողջովին նույնությամբ, ինչպես նախատեսվել էր Ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրով, ուստի այս պարագայում, Հանձնաժողովի կողմից «Սամիկ և Վարդան» ՍՊԸ-ի կողմից արձանագրված անհամապատասխանությունները չշտկելը չի համապատասխանում իրականությանը, որի արդյունքում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը արձանագրելով անհամապատասխանություն՝ գործել է ոչ իրավաչափ:

«Սամիկ և Վարդան» ՍՊԸ-ն 21.08.2018թ. Բողոքներ քննող անձին ներկայացրել է Բողոքի լրացում, որում նշել է, որ Օրենքի 9-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ գնման ընթացակարգի արձանագրությունը գնման ձևին համապատասխան պարունակում է հայտի մերժման դեպքում՝ դրա հիմնավորումը: Սակայն, Ըստ բողոքաբերի, հանձնաժողովը 03.08.2018թ. նիստի թիվ 4 արձանագրությամբ մերժել է Ընկերության հայտը, արձանագրելով, որ 1-ին, 5-րդ, 37-րդ, 38-րդ և 39-րդ չափաբաժինների մասով շտկված չեն արձանագրված անհամապատասխանությունները, սակայն արձանագրության մեջ ճի նշվել դրա հիմնավորումը, թե կոնկրետ ինչը չի համապատասխանել ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրին, կամ արձանագրված անհամապատասխանություններից ինչը չի շտկվել: Վերոգրյալից հետևում է, որ հանձնաժողովի կողմից խախտվել է նաև Օրենքի 9-րդ հոդվածի 8-րդ մասով սահմանված պահանջը:

Ելնելով վորոգրյալից՝ «Սամիկ և Վարդան» ՍՊԸ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրել է պարտավորեցնել Արտաշատ քաղաքի թիվ 3 մանկապարտեզի կողմից սննդամթերքի ձեռքբերման նպատակով հայտարարված ԱՐՏՔՅՄ-ԳՀԱՊՁԲ-18/02 ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովին դադարեցնել 11:00-ին կայացած նիստի թիվ 4-րդ արձանագրությամբ կայացված.

1.ԱՐՏՔՅՄ-ԳՀԱՊՁԲ-18/02 ծածկագրով գնման ընթացակարգը 1-ին, 5-րդ, 37-րդ, 38-րդ, և 39-րդ չափաբաժինների մասով չկայացած հայտարարելու մասին որոշումը;

2.«ՍԱՄԻԿ ԵՎ ՎԱՐԴԱՆ» ՍՊԸ-ի հայտը 1-ին, 5-րդ, 37-րդ, և 39-րդ չափաբաժինների մասով շտկումները չհամապատասխանող գնահատելու և մերժելու մասին որոշումները;

3.«ՍԱՄԻԿ ԵՎ ՎԱՐԴԱՆ» ՍՊԸ-ի վերաբերյալ փաստաթղթերը ֆինանսների նախարարություն ներկայացնելու որոշումը:

Բողոքի քննության նպատակով Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերին մասնակցում էր Ընկերության լիազորված ներկայացուցիչ Ռաֆայել Մկրտչյանը:

2. «<u>Արտաշատ քաղաքի թիվ 3 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 4-րդ մասով՝ Բողոքներ քննող անձը դիմել է «Արտաշատ քաղաքի թիվ 3 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ին «ՍԱՄԻԿ ԵՎ ՎԱՐԴԱՆ» ՍՊԸ-ի կողմից 10.08.2018թ. ներկայացված բողոքի վերաբերյալ որոշում կայացնելու նպատակով, նույն հոդվածով սահմանված ժամկետում Բողոքներ քննող անձին տրամադրել գրավոր դիրքորոշում, սակայն վերջինիս կողմից որևէ դիրքորոշում չի ներկայացվել:

Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստին մասնակցում էր Պատվիրատուի լիազորված ներկայացուցիչ Փայլակ Հակոբյանը:

3. <u>ԳԲԽ-ԷՍ-2018/94 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Բողոքներ քննող անձն ուսումնասիրել է «ՍԱՄԻԿ ԵՎ ՎԱՐԴԱՆ» ՍՊԸ-ի կողմից 10.08.2018թ. ներկայացրած բողոքը, բողոքի լրացումը, և կից փաստաթղթերը, «ԱՐՏՔՅՄ-ԳՀԱՊՁԲ-18/02» գնանշման հարցման հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), «ԱՐՏՔՅՄ-ԳՀԱՊՁԲ-18/02» ծածկագրով գնանշման հարցման հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 02.08.2018թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 3 և 03.08.2018թ. ժամը 16:00-ին կայացած նիստի թիվ 4 արձանագրությունները, «ՍԱՄԻԿ ԵՎ ՎԱՐԴԱՆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը.

«Արտաշատ քաղաքի թիվ 3 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի կարիքների համար սննդամթերքի ձեռքբերման նպատակով հայտարարված «ԱՐՏՔՅՄ-ԳՀԱՊՁԲ-18/02» գնանշման հարցման ընթացակարգին (այսուհետ նաև՝ Ընթացակարգ) մասնակցության հայտ է ներկայացրել «ՍԱՄԻԿ ԵՎ ՎԱՐԴԱՆ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի հրավերի մաս կազմող պայմանագրի նախագծին կից ներկայացված թիվ 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագրով Բողոքով վիճարկվող՝ 1-րդ, 5-րդ, 37-րդ, 38-րդ, և 39-րդ չափաբաժինների մասով սահմանվել են հետևյալ հատկանիշները.

«Հրավերով նախատեսված չափաբաժնի համարը՝ 1. Անվանումը և ապրանքային նշանը՝ Կարագ, Տեխնիկական բնութագիրը՝ Կարագ Սերուցքային, բաղադրությունը կաթնայուղ ոչ պակաս քան 82.9% , խոնավությունը ոչ ավելի քան 16%, պինդ ոչ յուղային բաղադրիչներ ոչ ավելի քան 1.4%, 100 գրամում 3090ԿՋ:

Հրավերով նախատեսված չափաբաժնի համարը՝ 5. Անվանումը և ապրանքային նշանը՝ Տավարի միս տեղական, Տեխնիկական բնութագիրը՝ Միս տավարի թարմ կամ պաղեցրած,ոսկորի և մսի հարաբերակցություն՝ համապատասխանաբար 70-80% մսեղիք, զարգացած մկաններով, պաղեցրած մսի մակերեսը չպետք է լինի խոնավ, պահված 04°C ջերմաստիճանի պայմաններում, I պարարտության: Անվտանգությունն ըստ N2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի: Մատակարարված ապրանքի համար ներկայացնել փասթաթուղթ որով վկայում է սպանդանոցի մսի իսկությունը: Բավարարի ՍՆՆԴԱՄԹԵՐՔ ՏԵՂԱՓՈԽՈՂ ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ԱՆՁՆԱԳՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ԱՆՁՆԱԳՐԻ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՁԵՎԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ 14 մարտի 2017 թվականի N85-Ն հրամանի պայմաններին:

Հրավերով նախատեսված չափաբաժնի համարը՝ 37. Անվանումը և ապրանքային նշանը՝ Եգիպտացորեն /պահածոյացված/, Տեխնիկական բնութագիրը՝ 1000 գր տարաներով, 100 գր սննդային արժեքը ՝ ճարպեր ոչ ավելի քան 0,7 , սպիտակուցներ ոչ ավելի քան 2,9 գր, կալորիականությունը առնվազն 57 կկալ, առանց կոնսերվատների: Պիտանելիության ժամկետը ոչ ավելի քան 24 ամիս:

Հրավերով նախատեսված չափաբաժնի համարը՝ 38. Անվանումը և ապրանքային նշանը՝ Վարունգի մարինադ, Տեխնիկական բնութագիրը՝ 1000 գր տարաներով, բաղադրությունը վարունգ, սխտոր, ծովաբողկ, մաղդանոս, սամիթ, քացախաթթու, աղ, 100 գր սննդային արժեքը՝ սպիտակուցներ 0, ածխաջրեր ոչ ավելի քան 3գր, սպիտակուցներ 0,

կալորիականությունը ոչ պակաս քան 125 կկալ, Պիտանելիության ժամկետը ոչ ավելի քան 24 ամիս, առանց կոնսերվատների:

Հրավերով նախատեսված չափաբաժնի համարը՝ 39. Անվանումը և ապրանքային նշանը՝ Քյուֆթա, Տեխնիկական բնութագիրը՝ Բաղադրությունը տավարի միս, սպիտակուցներ ոչ ավելի քան 12 գր, ճարպեր ոչ ավելի քան 15 գր: Պահպանման ճամկետները ոչ ավելի քան 15 օր: Մատակարարման ժամանակ պահպանման ժամկետի մնացորդ ոչ պակաս քան 7 օր»:

«ՍԱՄԻԿ ԵՎ ՎԱՐԴԱՆ» ՍՊԸ-ն Ընթացակարգին ներկայացված հայտի թիվ 4 հավելվածով՝ առաջարկվող ապրանքի հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության մասին հայտարարությամբ հայտնել և հավաստել է, որ «ԱՐՏՔՅՄ-ԳՀԱՊՁԲ-18/02» ծածկագրով բաց մրցույթին մասնակցելու նպատակով իր կողմից ներկայացված մասնակցության դիմումում նշված չափաբաժնի (չափաբաժինների) մասով առաջարկվող ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրերը համապատասխանում են նույն հրավերի համապատասխան չափաբաժնում (չափաբաժիններում) նշված ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրերի պահանջներին:

Նույն հայտարարությամբ մասնակիցը պարտավորվել է առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում «ԱՐՏՔՅՄ-ԳՀԱՊՁԲ-18/02» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել իր կողմից առաջարկվող ապրանքի (ապրանքների)՝ անվանումը, ապրանքային նշանը, արտադրողը, ծագման երկիրը և տեխնիկական բնութագրերը (ապրանքի ամբողջական նկարագիր):

Հանձնաժողովի 02.08.2018թ. նիստի թիվ 3 արձանագրության 1-ին կետով արձանագրվել է, որ «ՍԱՄԻԿ ԵՎ ՎԱՐԴԱՆ» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից՝ 1-ից 39-րդ չափաբաժինների մասով:

«ՍԱՄԻԿ ԵՎ ՎԱՐԴԱՆ» ՍՊԸ-ն, որպես «ԱՐՏՔՅՄ-ԳՀԱՊՁԲ-18/02» ծածկագրով գնանշման հարցման շրջանակում առաջին տեղը զբաղեցրած մասնակից, ըստ վիճարկվող չափաբաժինների ներկայացրել է իր կողմից առաջարկվող ապրանքի անվանումը, ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ծագման երկիրը և տեխնիկական բնութագրերը.

Չափաբաժնի համարը՝ 1. Անվանումը և ապրանքային նշանը՝ Կարագ, ապրանքային նշանը՝ ԷՔՍՏՐԱ, արտադրողի անվանումը՝ ԱՐՄԱՆ ԸՆԴ ՊԱՌՏՆԵՐ ՍՊԸ, ծագման երկիրը՝ Ուկրաինա, տեխնիկական բնութագրերը՝ կարագ սերուցքային, բաղադրությունը կաթնայուղ

ոչ պակաս քան 82.9%, խոնավությունը ոչ ավելի քան 16% , պինդ ոչ յուղային բաղադրիչներ ոչ ավելի քան 1.4%, 100 գրամում 3090ԿՋ:

Չափաբաժնի համարը՝ 5. Անվանումը և ապրանքային նշանը՝ Տավարի միս տեղական, արտադրողի անվանումը՝ տեղական, ծագման երկիրը՝ ՀՀ, տեխնիկական բնութագրերը՝ Միս տավարի թարմ կամ պաղեցրած, ոսկորի և մսի հարաբերակցություն՝ համապատասխանաբար 70-80% մսեղիք, զարգացած մկաններով, պաղեցրած մսի մակերեսը չպետք է լինի խոնավ, պահված 0-4°C ջերմաստիճանի պայմաններում, I պարարտության: Անվտանգությունն ըստ N2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդված: Մատակարարված ապրանքի համար ներկայացնել փասթաթուղթ որով վկայում է սպանդանոցի մսի իսկությունը: Բավարարի ՍՆՆԴԱՄԹԵՐՔ ՏԵՂԱՓՈԽՈՂ ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ԱՆՁՆԱԳՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ԱՆՁՆԱԳՐԻ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՁԵՎԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ 14 մարտի 2017 թվականի N85-Ն հրամանի պայմաններին:

Չափաբաժնի համարը՝ 37.Անվանումը՝ եգիպտացորեն /պահածոյացված/, ապրանքային նշանը՝ Տոպ Սան, արտադրողի անվանումը՝ ՀՊՍ Ջամար, Արաս Ֆուդ ՍՊԸ ծագման երկիրը՝ Լեհաստան, տեխնիկական բնութագրերը՝ 1000 գր տարաներով, 100 գր սննդային արժեքը՝ ճարպեր ոչ ավելի քան 0,7, սպիտակուցներ ոչ ավելի քան 2,9 գր, կալորիականությունը առնվազն 57 կկալ, առանց կոնսերվանտների: Պիտանելիության ժամկետը ոչ ավելի քան 24 ամիս:

Չափաբաժնի համարը՝ 38. Անվանումը՝ Վարունգի մարինադ, արտադրողի անվանումը՝ ԱՐԹՖՈՒԴ ՍՊԸ, ծագման երկիրը՝ ՀՀ, Տեխնիկական բնութագիրը՝ 1000 գր տարաներով, բաղադրությունը վարունգ, սխտոր, ծովաբողկ, մաղդանոս, սամիթ, քացախաթթու, աղ, 100 գր սննդային արժեքը ՝ սպիտակուցներ 0, ածխաջրեր ոչ ավելի քան 3գր, սպիտակուցներ 0, կալորիականություը ոչ պակաս քան 125 կկալ, Պիտանելիության ժամկետը ոչ ավելի քան 24 ամիս, առանց կոնսերվատների:

Չափաբաժնի համարը՝ 39. Անվանումը՝ քյուֆթա, արտադրողի անվանումը՝ ՄՈՒՇ ՍՊԸ, ծագման երկիրը՝ ՀՀ, Տեխնիկական բնութագիրը՝ բաղադրությունը տավարի միս, սպիտակուցներ ոչ ավելի քան 12 գր, ճարպեր ոչ ավելի քան 15 գր: Պահպանման ճամկետները ոչ ավելի քան 15 օր: Մատակարարման ժամանակ պահպանման ժամկետի մնացորդ ոչ պակաս քան 7 օր:

Նույն արձանագրության 2-րդ կետով Հանձնաժողովն արձանագրել է, որ Ընկերությունը Հրավերով սահմանված ժամկետում ներկայացրել է պահանջված որոկավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը, ընդ որում, ներկայացված փաստթղթերում առկա են հետևյալ անհամապատասխանությունները՝

2.1. Հրավերով թիվ 1 չափաբաժնի՝ /կարագի/ տեխնիկական բնութագրով կաթնայուղը սահմանված է ոչ պակաս քան 82,9%, իսկ մասնակցի կողմից ներկայացված հավելված 6.1-ով ապրանքի տեխնիկական բնութագրով յուղայնությունը 71.5-82.5%:

2.2. Հրավերով թիվ 5 չափաբաժնի՝ /տավարի միս/ տեխնիկական բնութագիրը ոսկոր և միս հարաբերակցությունը սահմանված է 70-80% մսեղիկ, իսկ մասնակցի կողմից ներկայացված հրավերի հավելված 6.1-ով մսեղիկը 50% է:

2.5. Հրավերով թիվ 37 չափաբաժնի՝ /եգիպտացորեն պահածոյացված/ մասնակցի կողմից ներկայացված հրավերի հավելված 6.1-ով ներկայացված չէ ապրանքային նշանը և արտադրողի անվանումը, առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը չի բնութագրում առաջարկվող ապրանքը, նշված չէ ապրանքի բնութագրի կոնկրետ չափ:

2.6. Հրավերով թիվ 38 /վարունգի մարինադ/ մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի տեխմնիկական բնութագիրը չի բնութագրում առաջարկվող ապրանքը, նշված չէ ապրանքի բնութագրի կոնկրետ չափ:

2.7. Հրավերով թիվ 39 /քյուֆթա/ մասնակցի կողմից ներկայացված հրավերի հավելված 6.1-ով ներկայացված չէ ապրանքային նշանը և արտադրողի անվանումը, մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի տեխմնիկական բնութագիրը չի բնութագրում առաջարկվող ապրանքը, նշված չէ ապրանքի բնութագրի կոնկրետ չափ:

Նույն արձանագրության 3-րդ կետի 1-ին ենթակետով հանձնաժողովը՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետը՝ գնահատող հանձնաժողովը որոշեց մեկ աշխատանքային օրով կասեցնել հայտերի գնահատման նիստը, ծանուցել մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

«Սամիկ և Վարդան» ՍՊԸ-ն ներկայացրել է հետևյալ շտկումները.

Չափաբաժնի համարը՝ 1. Անվանումը և ապրանքային նշանը՝ Կարագ, ապրանքային նշանը՝ ԷՔՍՏՐԱ, արտադրողի անվանումը՝ ԱՐՄԱՆ ԸՆԴ ՊԱՌՏՆԵՐ ՍՊԸ, ծագման երկիրը՝ Ուկրաինա, տեխնիկական բնութագրերը՝ Կարագ Սերուցքային, բաղադրությունը կաթնայուղ ոչ պակաս քան 82.9%, խոնավությունը ոչ ավելի քան 16%, պինդ ոչ յուղային բաղադրիչներ ոչ ավելի քան 1.4%, 100 գրամում 3090ԿՋ:

Չափաբաժնի համարը՝ 5. Անվանումը և ապրանքային նշանը՝ Տավարի միս տեղական, արտադրողի անվանումը՝ տեղական, ծագման երկիրը՝ ՀՀ, տեխնիկական բնութագրերը՝ Միս տավարի թարմ կամ պաղեցրած, ոսկորի և մսի հարաբերակցություն՝ համապատասխանաբար 70-80% մսեղիք, զարգացած մկաններով, պաղեցրած մսի մակերեսը չպետք է լինի խոնավ, պահված 0-4°C ջերմաստիճանի պայմաններում, I պարարտության: Անվտանգությունն ըստ N2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդված: Մատակարարված ապրանքի համար ներկայացնել փասթաթուղթ, որը վկայում է սպանդանոցի մսի իսկությունը: Բավարարի ՍՆՆԴԱՄԹԵՐՔ ՏԵՂԱՓՈԽՈՂ ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ԱՆՁՆԱԳՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ԱՆՁՆԱԳՐԻ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՁԵՎԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ 14 մարտի 2017 թվականի N85-Ն հրամանի պայմաններին:

Չափաբաժնի համարը՝ 37. Անվանումը՝ եգիպտացորեն /պահածոյացված/, ապրանքային նշանը՝ Տոպ Սան, արտադրողի անվանումը՝ ԶՊՍ Ջամար, Արաս Ֆուդ ՍՊԸ ծագման երկիրը՝ Լեհաստան, տեխնիկական բնութագրերը՝ 1000 գր տարաներով, 100 գր սննդային արժեքը՝ ճարպեր ոչ ավելի քան 0,7, սպիտակուցներ ոչ ավելի քան 2,9 գր, կալորիականությունը առնվազն 57 կկալ, առանց կոնսերվատների: Պիտանելիության ժամկետը ոչ ավելի քան 24 ամիս:

Չափաբաժնի համարը՝ 38. Անվանումը՝ Վարունգի մարինադ, արտադրողի անվանումը՝ ԱՐԹՖՈՒԴ ՍՊԸ, ծագման երկիրը՝ ՀՀ, Տեխնիկական բնութագիրը՝ 1000 գր տարաներով, բաղադրությունը՝ վարունգ, սխտոր, ծովաբողկ, մաղդանոս, սամիթ, քացախաթթու, աղ, 100 գր սննդային արժեքը ՝ սպիտակուցներ 0, ածխաջրեր ոչ ավելի քան 3գր, սպիտակուցներ 0, կալորիականությունը ոչ պակաս քան 125 կկալ, Պիտանելիության ժամկետը ոչ ավելի քան 24 ամիս, առանց կոնսերվատների:

Չափաբաժնի համարը՝ 39. Անվանումը՝ քյուֆթա, արտադրողի անվանումը՝ ՄՈՒՇ ՍՊԸ, ծագման երկիրը՝ ՀՀ, Տեխնիկական բնութագիրը՝ բաղադրությունը տավարի միս, սպիտակուցներ ոչ ավելի քան 12 գր, ճարպեր ոչ ավելի քան 15 գր: Պահպանման ճամկետները ոչ ավելի քան 15 օր: Մատակարարման ժամանակ պահպանման ժամկետի մնացորդ ոչ պակաս քան 7 օր:

Հանձնաժողովի 03.08.2018թ. նիստի թիվ 4 արձանագրության 1-ին կետի համաձայն՝ մասնակցի կողմից ներկայացված շտկված փաստաթղթերի գնահատման արդյունքներով

Հանձնաժողովն արձանագրեց, որ թիվ 1, 5, 37, 38 և 39 չափաբաժինների մասով անհամապատասխանությունները շտկված չեն:

Նույն կետի 2-րդ ենթակետով Հանձնաժողովը որոշել է թիվ 8 և 22 չափաբաժինների մասով «ՍԱՄԻԿ ԵՎ ՎԱՐԴԱՆ» ՍՊԸ-ին ճանաչել ընտրված մասնակից, իսկ 3-րդ ենթակետով՝ Ընթացակարգը 1, 5, 37, 38 և 39 չափաբաժինների մասով համարել չկայացած:

Բողոքի քննության նպատակով Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստում Ընկերության ներկայացուցիչը պնդեց Բողոքն ամբողջությամբ, Հանձնաժողովի ուշադրությունը հրավիրելով այն փաստի վրա, որ «Սամիկ և Վարդան» ՍՊԸ-ի կողմից որպես առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրեր Բողոքով վիճարկվող՝ 1-ին, 5-րդ, 37-րդ, 38-րդ և 39-րդ չափաբաժինների մասով ներկայացվել են «ԱՐՏՔՅՄ-ԳՀԱՊՁԲ-18/02» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի պայմանագրի նախագծին կից ներկայացված տեխնիկական բնութագրերը՝ նույնությամբ: Հետևաբար, ըստ բողոքաբերի, «Սամիկ և Վարդան» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ապրանքների տեխնիկական բնութագրերը ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագերին չհամապատասխանելու հիմնավորմամբ մերժելու Հանձնաժողովի կայացրած որոշումն առնվազն անտրամաբանական է և չի բխում գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ և Հրավերով սահմանված պահանջներից:

Պատվիրատուի ներկայացուցիչն առարկեց, հայտնելով, որ «Սամիկ և Վարդան» ՍՊԸ-ի կողմից ներկայացված առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում թիվ 1 /կարագ/ և թիվ 5 /տավարի միս/ չափաբաժինների մասով Ընկերության կողմից ներկայացված բնութագրերում առաջարկվող ապրանքների համապատասխան պարամետրերը (օր. կաթնայուղի պարունակությունը, խոնավությունը, ոսկորի և մսի հարաբերակցությունը) նշված չեն կոնկրետ թվային կամ տոկոսային ցուցանիշի տեսքով, այլ նշված են դրանց նվազագույն կամ առավելագույն թույլատրելի շեմերը, կամ տոկոսային միջակայքեր, /օրինակ՝ 70-80% մսեղիք/, ինչը Պատվիրատուի ներկայացուցչի կարծիքով, ընդունելի չէ: Թիվ 37 /եգիպտացորեն պահածոյավցված/ և թիվ 38 /վարունգի մարինադ/ և թիվ 39 /քյուֆթա/ չափաբաժինների մասով Ընկերության կողմից ներկայացված բնութագրերում նույնպես, ըստ Պատվիրատուի ներկայացուցչի, առկա է նմանատիպ խախտում՝ ներկայացված չեն առաջարկվող ապրանքների համապատասխան պարամետրերի կոնկրետ թվային ցուցանիշներ: Հաշվի առնելով նշված հանգամանքը, Հանձնաժողովի կողմից Ընկերության հայտը գնահատվել է Հրավերի պահանջներին չհամապատասխանող:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ)՝

- 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում ապրանքների գնման դեպքում իր կողմից հաստատված հայտարարություն՝ առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ՝ պայմանով, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում հրավերով սահմանված կարգով ներկայացնում է ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ծագման երկիրը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

- 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ նույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև նույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ: Նույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթերն ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

- 47-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված՝ ներառյալ կոմիտեի կողմից տրամադրված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև նույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը: Կարգի 48-րդ կետի համաձայն՝

առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից.

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

«ԱՐՏՔՅՄ-ԳՀԱՊՁԲ-18/02» ծածկագրով ընթացակարգի հրավերի՝

-7.2 կետի համաձայն՝ հայտերը գնահատվում են նույն հրավերով սահմանված կարգով:

-7.12 կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հանձնաժողովի քարտուղարը հայտերի բացման նիստի ավարտից հետո ոչ ուշ քան հաջորդող աշխատանքային օրը՝ էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել հայտով առաջարկված ապրանքի (ապրանքների) ամբողջական նկարագիրը: Նույն ենթակետով սահմանված ժամկետում ապրանքի ամբողջական նկարագիրը ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը և նույն նիստում հանձնաժողովը առաջին տեղը զբաղեցրած մասնակից է ճանաչում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին՝ կիրառելով սույն հրավերի 1-ին մասի 7.12-ից 7.20-րդ կետերով սահմանված ընթացակարգը:

- 7.16 կետի համաձայն՝ (...) հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրի համապատասխանությունը նույն հրավերի պահանջներին, իսկ անհամապատասխանություն արձանագրելու դեպքում հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ պարտադիր և մանրամասն նկարագրվում են ապրանի ամբողջական նկարագրում սույն հրավերի պահանջների նկատմամբ արձանագրված անհամապատասխանությունները:

- 7.19 կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ նույն հրավերի 1-ին մասի 7.16 կետով նախատեսված փաստաթղթերը գնահատելու նպատակով հրավիրվող նիստում՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին՝

առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը: Ընդ որում ծանուցմանը պարտադիր կցվում է հանձնաժողովի նիստի արձանագրության պատճենը, որում պարտադիր և մանրամասն պետք է նկարագրված լինեն ապրանքի ամբողջական նկարագրում նույն հրավերի պահանջների նկատմամբ արձանագրված անհամապատասխանությունները:

-7.20 կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից.

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է և նույն նիստում հանձնաժողովը առաջին տեղը զբաղեցրած մասնակից է ճանաչում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին՝ կիրառելով սույն հրավերի 1-ին մասի 7.12-ից 7.19-րդ կետերով սահմանված ընթացակարգը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք)՝

- 9-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ գնման ընթացակարգի արձանագրությունը գնման ձևին համապատասխան պարունակում է հայտի մերժման դեպքում՝ դրա հիմնավորումը:

- 13-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

- 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են: Նույն հոդվածի 5-րդ և 6-րդ մասերի համաձայն՝ առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո՝ հրավերով սահմանված ժամկետում՝

1) առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

2) հանձնաժողովը գնահատում է սույն մասի 1-ին կետի համաձայն ներկայացված փաստաթղթերի (տեղեկությունների) համապատասխանությունը հրավերով սահմանված պահանջներին, և հրավերով սահմանված դեպքերում ու կարգով գնահատում է տվյալ մասնակցի գնային և ոչ գնային (տեխնիկական) առաջարկի հիմնավորվածությունը:

Հայտը գնահատվում է բավարար, եթե սույն հոդվածի 5-րդ մասի համաձայն ներկայացված տվյալները բավարարում են հրավերով սահմանված պահանջները: Նման դեպքում մասնակիցը հայտարարվում է ընտրված:

Այսպիսով, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

- «Սամիկ և Վարդան» ՍՊԸ-ի կողմից հավելված 6.1-ի շտկված տարբերակով ներկայացված՝ առաջարկվող ապրանքների տեխնիկական բնութագրերը նույնությամբ համապատասխանում են Բողոքով վիճարկվող՝ 1-ին, 5-րդ, 37-րդ, 38-րդ և 39-րդ չափաբաժինների մասով «ԱՐՏՔՅՄ-ԳՀԱՊՁԲ-18/02» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի պայմանագրի նախագծին կից ներկայացված տեխնիկական բնութագրերին:

- «Սամիկ և Վարդան» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հավելված 6.1-ի շտկված տարբերակով ներկայացված՝ առաջարկվող ապրանքների տեխնիկական բնութագրերը Հանձնաժողովի կողմից գնահատվել են Հրավերով սահմանված ապրանքների բնութագրերին չհամապատասխանող:

- 03.08.2018թ. նիստի թիվ 4 արձանագրությամբ թիվ 1-ին, 5-րդ, 37-րդ, 38-րդ և 39-րդ չափաբաժինների մասով Ընկերության կողմից հավելված 6.1-ով ներկայացված ապրանքներիի ամբողջական նկարագրում Հրավերի պահանջների նկատմամբ արձանագրված անհամապատասխանությունները Հանձնաժողովի կողմից սպառիչ և մանրամասն չեն նկարագրվել:

Միաժամանակ, Բողոքներ քննող անձն արձանագրում է նաև, որ Պատվիրատուի ներկայացուցիչը չվկայակոչեց գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված որևէ դրույթ, որով նախատեսվում է, որ առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրի առանձին հատկանիշները պետք է բնութագրվեն բացառապես կոնկրետ թվային (կամ տոկոսային) ցուցանիշներով, և չեն կարող ներկայացվել թվային (կամ տոկոսային) միջակայքի ձևով:

Հաշվի առնելով վերը նշված փաստական և իրավական հանգամանքները, Բողոքներ քննող անձը գտնում է, որ.

- «Սամիկ և Վարդան» ՍՊԸ-ի կողմից հավելված 6.1-ի շտկված տարբերակով ներկայացված՝ առաջարկվող ապրանքների տեխնիկական բնութագրերը նույնությամբ

համապատասխանում են Բողոքով վիճարկվող՝ 1-ին, 5-րդ, 37-րդ, 38-րդ և 39-րդ չափաբաժինների մասով Հրավերի պայմանագրի նախագծի հավելված 1-ով ներկայացված տեխնիկական բնութագրերին, հետևաբար, Հանձնաժողովը Ընկերության կողմից ներկայացված ապրանքների ամբողջական նկարագրերը Հրավերով սահմանված ապրանքների բնութագրերին չհամապատասխանող գնահատելով՝ գործել է ոչ իրավաչափ՝ խախտելով Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջը:

- Հանձնաժողովը՝ 03.08.2018թ. նիստի թիվ 4 արձանագրությամբ սպառիչ և մանրամասն չնկարագրելով Ընկերության կողմից հավելված 6.1-ով ներկայացված ապրանքների ամբողջական նկարագրում Հրավերի պահանջների նկատմամբ արձանագրված անհամապատասխանությունները, ըստ էության, չի արձանագրել Ընկերության հայտը մերժելու հիմնավորումը՝ խախտելով Օրենքի 9-րդ հոդվածի 8-րդ մասով սահմանված պահանջը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «բ» ենթակետով՝ բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

1.«ՍԱՄԻԿ ԵՎ ՎԱՐԴԱՆ» ՍՊԸ-ի կողմից ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին 10.08.2018թ. ներկայացրած բողոքը բավարարել մասնակի:

2.Պարտավորեցնել Արտաշատ քաղաքի թիվ 3 մանկապարտեզի կողմից սննդամթերքի ձեռքբերման նպատակով հայտարարված ԱՐՏՔՅՄ-ԳՀԱՊՁԲ-18/02 ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովին՝ ընդունել 03.08.2018թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 4-րդ արձանագրությամբ կայացված ԱՐՏՔՅՄ-ԳՀԱՊՁԲ-18/02 ծածկագրով գնման ընթացակարգը 1-ին, 5-րդ, 37-րդ, 38-րդ, և 39-րդ չափաբաժինների մասով չկայացած հայտարարելու մասին որոշումը դադարեցնելու վերաբերյալ համապատասխան որոշում:

3.Պարտավորեցնել Հանձնաժողովին՝ ընդունել «ՍԱՄԻԿ ԵՎ ՎԱՐԴԱՆ» ՍՊԸ-ի հայտի 1-ին, 5-րդ, 37-րդ, 38-րդ և 39-րդ չափաբաժինների մասով շտկումները չհամապատասխանող գնահատելու և մերժելու մասին որոշումները դադարեցնելու վերաբերյալ համապատասխան որոշում:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝

ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ